ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ
ՎՐԱՑԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆԸ
ՎՐԱՑԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն, Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Գերագույն Սովետի Նախագահությունը և ՍՍՌՄ Մինիստրների Սովետը ջերմորեն ողջունում և շնորհավորում են Վրաստանի բանվորներին, կոլտնտեսականներին, ինտելիգենցիային, բոլոր աշխատավորներին Վրաստանում Սովետական իշխանության հաստատման և Վրաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորման 40-ամյակի առթիվ:

Վրաստանի Կոմունիստական պարտիան Լենինի մեծ պարտիայի հնագույն մարտական ջոկատներից մեկն է: Նրա պատմությունը Սովետական Միության Կոմունիստական փառապանծ պարտիայի պատմության անխզելի բաղկացուցիչ մասն է: Վրաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորումը քաղաքական մեծ կարևորություն ունեցող իրադարձություն հանդիսացավ վրաց ժողովրդի կյանքում:

Լենինյան Կենտրոնական Կոմիտեի ղեկավարությամբ Վրաստանի Կոմունիստական պարտիան գլխավորեց աշխատավորների պայքարը սոցիալական և ազգային ազատագրության համար, իսկ Սովետական իշխանության հաստատումից հետո՝ նոր, սոցիալիստական կյանքի կառուցման համար, ռեսպուբլիկայի էկոնոմիկայի և կուլտուրայի ծաղկման համար:

Չորս տասնամյակի ընթացքում Վրաստանի աշխատավորները Անդրկովկասի ժողովուրդների, մեր երկրի բոլոր ժողովուրդների բարեկամական համագործակցությամբ հաջողությամբ լուծում են հասարակության կոմունիստական վերափոխման խնդիրները: Հայրենական Մեծ պատերազմի դաժան տարիներին նրանք, ինչպես և բոլոր սովետական մարդիկ, ցուցադրեցին անսահման նվիրվածություն սոցիալիստական Հայրենիքին, Կոմունիստական պարտիային, հավատարմություն ժողովուրդների լենինյան բարեկամությանը և իրենց արժանի ավանդը մուծեցին ֆաշիստական զավթիչների դեմ երկրի պատմական հաղթանակի գործում:

Վրաց ժողովուրդը օրինական հպարտության զգացումով է այժմ ամփոփում պայքարի և աշխատանքի քառասնամյա փառապսանծ ուղու արդյունքները, որը նշանավորվեց նրա նակատագրում կատարված արմատական շրջա-

դարձով: Այդ տարիներին Վրաստանը դարձավ հզոր արդյունաբերություն, բազմանյուղ գյուղատնտեսություն, բարձր զարգացած սոցիալիստական կուլտուրա ունեցող ռեսպուբլիկա: Արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը 1913 թվականի համեմատությամբ աճել է 40 անգամ: Ռեսպուբլիկայում զգալիորեն շատ էլեկտրաէներգիա է արտադրվում, հան արտադրում էին նախահեղափոխական Ռուսաստանի բոլոր էլեկտրակայանները: Սոցիալիստական Վրաստանում ստեղծվել և մեծ զարգացում են ստացել մետալուրգիական, մեքենաշինական, լեռնահանքային, էլեկտրատեխնիկական, քիմիական արդյունաբերությունը և այլ նյուղեր: Վերջին տարիների կարևորագույն նվաճումներից մեկը եղավ Ղարաղաղ—Թբիլիսի գազամուղի, Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ատոմային ռեակտորի կառուցումը:

Սովետական իշխանության տարիներին հսկայական, բերկրալի փոփոխություններ են կատարվել ռեսպուբլիկայի գյուղատնտեսության մեջ: Կոլեկտիվացման հաղթանակը անճանաչելիորեն փոխեց վրացական գյուղի դեմքը: Կոլտնտեսային կարգը գյուղացիության առջև բացեց երջանիկ կյանքի ճանապարհը: Ռեսպուբլիկայում այժմ ստեղծվել և հաջողությամբ գործադրվում է մեքենայացված սոցիալիստական գյուղատնտեսությունը: Ողջունելով ՍՄԿՊ Կենտկոմի Հունվարյան պլենումի որոշումները, գյուղի աշխատավորները պայքարում են գյուղատնտեսական արտադրության հետագա անշեղ վերելքի համար:

Անընդհատ բարձրանում է ռեսպուբլիկայի աշխատավորների նյութական բարեկեցությունը, ծաղկում է վրաց ժողովրդի՝ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան: Ռեսպուբլիկայում կա դպրոցների, գիտա-հետազոտական հիմնարկների, ակումբների, գրադարանների, թանգարանների, կինոթատրոնների լայն ցանց: Մեծ հաջողությունների են հասել գրականությունն ու արվեստը:

Տնտեսական և կուլտուրական շինարարության ասպարեզում ռեսպուբլիկայի աշխատավորների հաջողությունները Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության լենինյան ազգային հաղթականության իրականացման, ռուս, ուկրաինական, բելոռուս ժողովուրդների և Սովետական Միության եղբայրական մյուս ժողովուրդների մշտական օգնության արդյունքը հանդիսացան: Մեր Երկրի ժողովուրդների համերաշխ, միասնական ընտանիքում, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, վրաց ժողովուրդը անձնվիրաբար պայքարում է պարտիայի XX և XXI համագումարների պատմական որոշումների կենսագործման համար, կոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցման նոր հաջողությունների համար: Վրաստանի աշխատավորները մեծ ոգևորությամբ ու խանդավառությամբ ամբողջ սովետական ժողովրդի հետ միասին պատրաստվում են ՍՄԿՊ XXII համագումարին, ձգտելով այն նշանավորել տնտեսական և կուլտուրական շինարարության նոր հաջողություններով:

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն, ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը և ՍՍՌՄ Մինիստրների Սովետը հաստատ վստահություն են հայտնում, որ Վրաստանի աշխատավորները ուժ ու եռանդ չեն խնայի կոմունիստական շինարարության հոյակապ խնդիրների հաջող լուծման պայքարում: Վրաց տաղանդավոր ժողովրդին նոր հաջողություններ են մաղթում կոմունիզմի կառուցման գործում, յոթնամյա

պլանի առաջադրանքների կատարման ասպարեզում, ռեսպուբլիկայի էկոնոմիկայի և կուլտուրայի հետագա ծաղկման պայքարում:

Կեցցե՞ Վրացական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի 40-րդ տարեդարձը:

Կեցցե՞ Վրաստանի Կոմունիստական պարտիան՝ ՍՄԿՊ մարտական ջոկատը:

Կեցցե՞ Սովետական Միության ժողովուրդների եղբայրական բարեկամությունը՝ մեր մեծ Հայրենիքի հզորության ու բարգավաճման անսասան հիմքը:

Կեցցե՞ Սովետական Միության Կոմունիստական պարտիան, որը սովետական ժողովրդին վստահորեն տանում է դեպի կոմունիզմի հաղթանակը:

ՍՄԿՊ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ	ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ	ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏ